

Ժամանակների պատմամշակութային հուշածանցներին, այսինքն՝ արժեքայինը, շահեկանը իմացաբանականի, ճշմարտության մեջ էին փնտրում, իսկ ազերինները փորձում էին ճշմարտություն հորինել՝ իմացաբանականը նենգափոխելով արժեքայինի:

ОЦЕНКА ИСТИНЫ В ЛИТЕРАТУРНОМ НАСЛЕДИИ А. ИСААКЯНА

Г. Г. КАДЖОЯН

Статья посвящена выявлению и оценке философского понятия истины посредством анализа и осмысления литературного наследия знаменитого армянского поэта Аветика Исаакяна.

APPRECIATION OF TRUTH IN THE LITERARY HERITAGE OF AVETIK ISAHAKYAN

H. G. GHAJOYAN

The article is about the reveal and appreciation of “truth” as a philosophical concept through the analysis and comprehension of the literary heritage of the famous Armenian poet Avetik Isahakyan.

ՀԻՆՂՈՒԻՉՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ. ՎԵՂԱՅԱԿԱՆ ԿՐՈՆ

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Փիլ. գիտ. թեկն., դոցենտ

Հինդուիզմը (սանսկրիտ.՝ *սանատանա դհարմա*) աշխարհի ամենահին և ազդեցիկ կրոններից է: Այս կրոնի անվանումն առաջացել է Ինդոս գետի դեռևս Ավեստայում փաստված *Սինդհու* իրանական անվանումից, որը հետագայում դարձել է ոչ միայն երկրի անվանում, այլև այն բնակեցրած ժողովուրդների ընդհանրական անուն:

Իբրև կրոնական ֆենոմեն՝ հինդուիզմը առանձնանում է բարդությամբ և հակասականությամբ, խճվածությամբ ու քառսայնությամբ: Պատմամշակութային լուրջ խնդիր է նույնիսկ «**հինդուիզմ**» տերմինի սահմանումը¹: Մինչ օրս չկա բավարար սահմանում և նույնիսկ բացատրություն այն հարցին, թե ինչը պետք է համարել հինդուիզմ, ինչպիսին են այդ հասկացության էությունը և սահմանները: Իր պատմության մի քանի հազարամյակների ընթացքում հինդուիզմը ձևավորվել է իբև կրոնափիլիսոփայական ուսմունքների և դիցաբանական

¹ Հինդուիզմ տերմինի և հինդուիզմի այլ հիմնահարցերի քննական վերլուծությունը տես **Альбедиль М. Ф.** Индуизм. Главная религия Индии, СПб. 2006, с. 8-27.

պատկերացումների սինթեզ: Այն ներթափանցել է հինդուիստի կյանքի բոլոր ոլորտները՝ աշխարհայացքային, սոցիալական, իրավական, վարքագծի, նույնիսկ անձնական և այլն: Այս իմաստով հինդուիզմը ոչ միայն և ոչ այնքան համարվում է կրոն, որքան կենսակերպ և վարքագծի ամբողջական չափանիշ: Հինդուիզմի կրոնական բարդագույն համակարգը ճկուն ձևով իր մեջ զուգակցում է իրար հակադրվող ծայրահեղություններ և հմտորեն հարմարվում է հասարակական և քաղաքական ամենաբազմազան պայմաններին՝ պահպանելով անսովոր խայտաբղետությունը, յուրահատուկ փայլն ու կենսակայունությունը: Կարողանալով միավորել անմիավորելի և ստանալ ամենաարտասովոր ձևեր՝ հինդուիզմն ունի նոր ուղղություններ և հոսանքներ ծնելու զարմանալի ունակություններ: Սակայն այս կրոնի առաջին հայացքից անհամատեղելի անսահմանությունը գոյություն ունի միասնական ընդհանրության շրջանակներում, ինչը թույլ է տալիս հինդուիզմը ներկայացնել իբրև ինքնուրույն և ամբողջական կրոնական համակարգ՝ ընդհանուր աշխարհայացքային կողմնորոշմամբ: Թվացյալ ողջ անդեմությանը և անորոշությանը հանդերձ՝ հինդուիզմը միշտ աչքի է ընկել բացառիկ կայունությամբ: Մագնիսի նման նա իր կողմն է ձգել ուրիշ պաշտամունքներ, այս կամ այն կերպ կլանել օտար աստվածների, սեփական կարիքներին և հայացքներին ընտելացրել դիցաբանական-ծիսական օտար հայեցակետեր և ապահովել երկարակեցություն և դիմացկունություն՝ դիմանալով Հնդստան թերակղզում գոյություն ունեցող բուդդայականության և մյուս կրոնների հետ մրցակցությամբ: Հինդուիզմն առաջին հերթին համարվում է կրոնադավանական, տրամաբանորեն կազմակերպված համակարգ, որի յուրահատուկ գծերը հեշտ է թվարկել, ինչպես նաև հեշտ է երևան հանել նրա յուրակերպությունը: Այս կրոնը ամենատարբեր գաղափարների և մտքերի, հոսանքների, ուղղությունների խառնակույտ է, որոնք գոյություն ունեն որոշակի ամբողջական գոյացության սահմաններում և արմատականորեն չեն հակադրվում գլխավոր, հիմնական դրույթներին: Հինդուիզմում չկան և չեն կարող լինել ուղղափառ ճշմարիտ հավատքին հակադրվող հերետիկոսություններ (մեզ համար սովորական քրիստոնեական ընկալմամբ), քանի որ հինդուիզմում չկա միասնական ընդգծված ուսմունք: Յուրաքանչյուր ձև և յուրաքանչյուր պաշտամունք ունի որոշակի բարոյական արժեք: Հինդուիզմի առանձնահատուկ բնույթը դրսևորվում է ոչ միայն պաշտամունքների, երկրպագության օբյեկտների բազմազանությամբ և ծիսադիցաբանական կոմպլեքսների առատությամբ, այլև այլ պաշտամունքների նկատմամբ միանգամայն յուրահատուկ վերաբերմունքով:

Առաջին հայացքից հինդուիզմը թվում է անտրամաբանական, անկազմակերպ և համակարգման չենթարկվող: Սակայն ավանդական հնդկական մշակույթի տեսանկյունից այն ունի միանգամայն յուրահատուկ համակարգվածություն՝ նա միացած է դիցաբանական հիմքով և հիմնականում պահպանել է արխայիկ դարաշրջանի կոլորիտը: Հինդուիզմը կարելի է բնութագրել իբրև նշանների և սիմվոլների ամբողջություն, որը պահպանել է հնագույն ավանդությունները՝ դրանք զարգացնելով և պահպանելով պատմական տարբեր պայմաններում:

Հինդուիզմը չի ունեցել և առ այսօր չունի ամբողջական կազմակերպություն (քրիստոնեական եկեղեցու նմանությամբ)՝ ոչ տեղական և ոչ էլ համահնդկական մասշտաբով: Հնդկաստանում կառուցված պաշտամունքային տաճարները ինք-

նուրույն կառույցներ են և չեն ենթարկվում կրոնական աստիճան ունեցող որևէ գերագույն անձի: Տարատեսակ քրմերը (բրահմանները), ուսուցիչ-աչարյաները, գուրունները սպասարկել և այսօր էլ սպասարկում են առանձին ընտանիքների, ուղղությունների, արքաների, մասնավոր անձանց և այլն, և երբեք կազմակերպվածությամբ միմյանց կապված չեն եղել և չեն: Հինդուիզմի գոյության ողջ ընթացքում երբեք չեն հրավիրվել համահնդկական ժողովներ, որոնք կսահմանեին ընդհանուր նորմեր, սկզբունքներ և վարքի կանոններ կամ էլ կհամակարգեին տեքստերը: Հինդուիզմին խորթ է նաև հավատորսությունը (*պրոգելիսիզմ*)՝ հինդուիստ չեն դառնում, հինդուիստ ծնվում են:

Հինդուիստի համար գլխավորը եղել և մնում է հին ավանդություններին, նախնիների պատվիրաններին հետևելը և ծիսական-վարքագծային նորմերի պահպանումը, որոնք, ըստ ավանդության, ավետվել են աստվածների կողմից, գրի առնվել առասպելներում և հաստատվել սրբազան տեքստերի հեղինակությամբ:

Ժամանակակից կրոնագիտության մեջ հինդուիզմը համարվում է ինքնուրույն կրոնական համակարգ և ուսումնասիրվում է իր գաղափարական հիմք համարվող վեդայական կրոնից ու բրահմանականությունից անկախ²: Սակայն փաստ է, որ ժամանակակից հինդուիզմի պատմական և գաղափարական ակունքները պետք է փնտրել հենց հնագույն ժամանակներում՝ սկսած դեռևս մ. թ. ա. V հազարամյակում Ինդոս գետի հովտում ձևավորված հնագույն քաղաքակրթությունից, որն ընդունված է անվանել նախահնդկական կամ հարապակա՝³: Ընդհանրապես, որոշ գիտնականներ հինդուիզմի պատմական զարգացման ողջ ժամանակաշրջանը պայմանականորեն բաժանում են հինգ մասերի՝

«Ինդոսի հովտի քաղաքակրթություն – մոտ մ. թ. ա. 2500-1750 թթ.,

Վեդայական դարաշրջան – մոտ մ. թ. ա. 1200-200 թթ.,

Էպիկական դարաշրջան – մոտ մ. թ. ա. 400-մ.թ. 800 թթ.,

Միջնադարյան Հարավային Ասիա – մոտ 750-1750 թթ.,

Ժամանակակից Հարավային Ասիա – 1750 թ. – ից մեր օրերը»⁴:

Նախահնդկական քաղաքակրթության կենտրոն են հանդիսացել այն ժամանակների համար բավականին զարգացած Հարապպա և Մոհենջո Դարո քաղաքները: Այս քաղաքակրթությունը, ստեղծված լինելով դրավիդալեզու ժողովուրդների կողմից, ունեցել է բարձր զարգացած մշակույթ՝ կրոնադիցաբանական պատկերացումների բարդ համակարգով և տեղական ընդգծված կոլորիտով:

Նախահնդկական քաղաքակրթությունից պահպանված սահմանափակ քանակությամբ պեղածո նմուշների ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտել այդ քաղաքակրթության կրոնադիցաբանական պատկերացումների և հավատալիքների հիմնական առանձնահատկություններն ու բնութագրիչ գծերը: Փաստերի համադրությունը հնարավորություն է տվել ուսումնասիրողնե-

² История религии (Под общ. ред. И. Н. Яблокова). В 2 т., т. 1., М., 2002, с. 286-299.

³ Մանրամասները տես **Դեյվիդ Մ. Հայն**. Индуизм. Эксперименты в области сакрального / Религиозные традиции мира. В 2 т., т. 2. М., 1996, с. 137-143. Տես նաև Encyclopedia of Religion, Second edition, 2005, Thomson Gale, p. 3988-3989.

⁴ **Դեյվիդ Մ. Հայն**, там же, с. 135.

րին նախահնդկական քաղաքակրթության հավատալիքներում առանձնացնել իգական և արական սկիզբներին առնչվող պտղաբերության գաղափարի առկայությունը: Դրա վկայությունն է պտղաբերության զարգացած և ազդեցիկ պաշտամունքը մարմնավորող մայր աստվածուհու կերպարը, որն իր մեջ խտացնում էր կնոջ տիեզերածնական հատկանիշները և դրանց ուղղակի կապը աշխարհածնության մասին պատկերացումներին: Պտղաբերության արական սկիզբը մարմնավորում էր գոմեշը (գոմեշ-աստվածը): Այդպիսին է Մոհենջո Դարոյից գտնված մի կնիքի վրա պատկերված գահին բազմած եղջյուրավոր աստվածը (գոմեշը), որն սկզբում դիտվում էր իբրև հնդկական գլխավոր աստված Շիվայի նախատիպ, սակայն հետագայում ուսումնասիրողները հանգեցին այն եզրակացության, որ այդ կերպարը շատ ավելի հին է (ավելի հին, քան նախահնդկական քաղաքակրթությունը) և համադրելի է էլամում հայտնաբերված նույնատիպ ավելի հին նմուշի հետ⁵: Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ պտղաբերության արական սկիզբը այսօր էլ առկա է Շիվայի պաշտամունքում (հատկապես *լինգամի* պաշտամունքի տեսքով)⁶, իսկ նրա սրբազան կենդանին և խորհրդանիշն է համարվում Նանդի ցուլը⁷: Իգական սկիզբ Մեծ Մոր կերպարը հետագայում ի հայտ եկավ հինդուական ավանդություններում՝ իգական աստվածությունների բազմազանության (*շակտիզմ*) տեսքով⁸:

Նախահնդկական քաղաքակրթությանը բնորոշ է եղել նաև կենդանիների և ծառերի, սրբազան գետերի և քարերի, օձերի և լուսատուների պաշտամունքները, պահպանվել են մաքրագործման և զոհաբերությունների ծիսական պրակտիկայի հիշատակություններ, որոնց մեծ մասը այս կամ այն կերպ պահպանվել է մինչ օրս:

Հինդուիզմի գաղափարական գլխավոր ակունքը այդուհանդերձ **վեդայական կրոնն** է: Մոտավորապես մ. թ. ա. II հազարամյակի կեսերին Յնդկաստան են ներխուժում արիական մարտունակ քոչվոր ցեղերը՝ իրենց հետ բերելով դիցաբանական և ծիսական բոլորովին նոր պատկերացումներ: Այդ ընթացքում նախահնդկական քաղաքակրթությունը արդեն անկում էր ապրում, և արիացիներն այն արագացրին: Նրանք բնակություն հաստատեցին Ինդոսի ավազանում՝ Փենջաբում, իսկ մ. թ. ա II-I հազարամյակների սահմանագծին շարժվեցին դեպի արևելք՝ բնակություն հաստատելով Գանգեսի ավազանում:

Այդ ժամանակաշրջանում էլ ձևավորվեցին հինդուիզմի գաղափարական ակունքներից մեկը համարվող *Վեդաները* (սանսկրիտ. վեդա՝ «իմաստություն» կամ «գիտելիք»)՝ սրբազան տեքստերի ժողովածուները, որոնց հեղինակությունը հինդուիզմում առ այսօր շարունակում է մնալ անգերազանցելի: Այդ ժողովածուներում է ամփոփված հնդ-արիացիների կրոնադիցաբանական այն համակարգը, որն հայտնի է վեդայական կրոն անունով: Փաստացի արիացի նվաճողներին է պատկանում հնդկական գրավոր հուշարձաններից մեզ հասած ամենա-

⁵ Նույն տեղում, էջ 141-142:

⁶ История религии. Т. 1., с. 312-313, **Альбедиль М. Ф.** Индуизм, с. 58-62.

⁷ **Альбедиль М. Ф.** Индуизм, с. 62.

⁸ История религии. Т. 1., с. 313-315.

հին նմուշները: Վեդաների մեջ մտնում են տարբեր ժամանակներում ստեղծված, կառուցվածքով, ուղղվածությամբ, գործառնություններով և մշակույթով տարբեր տեքստեր, որոնք, այնուամենայնիվ, կազմում են մեկ ընդհանրություն, քանի որ կատարում են հեղինակավոր սրբազան տեքստերի դեր: Վեդայական կանոնի տեքստերի առավել ընդունված դասակարգումը այն երկու մասի բաժանելն է: Առաջին խումբը կոչվում է *շրուտի* (բառացի՝ «լսված», այսինքն հայտնությամբ տրված), իսկ երկրորդ խումբը *սմրիտի* (բառացի՝ «հիշված», այսինքն ավանդություն)⁹: Շրուտին ավանդաբար բաժանվում է չորս վեդաների՝ **Ռիգվեդա, Յաջուրվեդա, Սամավեդա և Ափհարվավեդա**՝ ժողովածուներ, որոնք կոչվում են նաև *սամհիտ*: Դրանք հիմների, երգերի, զոհաբերությունների բանաձևերի և հմայախոսությունների ժողովածուներ են: Դրանցում ամփոփված են աշխարհի և դրանում մարդու տեղի և դերի մասին հին արիացիների գիտելիքներն ու պատկերացումները:

Հին արիացիների կրոնադիցաբանական աշխարհը եղել է բավականին հին և բազմաշերտ: Ամենահին շերտին են առնչվում հնդեվրոպական ընդհանրության ժամանակաշրջանին վերաբերող աստվածությունները: Արիացիները դրանց երկրպագում էին դեռևս մինչև Հնդստան թերակղզի ներթափանցելը, հազարավոր կիլոմետրեր հեռու՝ հնդեվրոպական նախահայրենիքում: Հաջորդ շերտը ձևավորել են հնդ-իրանական աստվածները (հնդեվրոպական ընդհանրությունը քայքայվել է հավանաբար մոտ մ. թ. ա. III հազարամյակում)¹⁰:

Վեդայական կանոնի ամենահին և հեղինակավոր ժողովածուն համարվում է Ռիգվեդա սամհիտը (հիմների ժողովածու), որը ներառում է արիացիների հնագույն աստվածներին նվիրված 1028 հիմներ և աղոթքներ¹¹: Վեդայական հիմնը նվիրված է այս կամ այն աստծուն, նրա արժանիքների և հատկությունների փառաբանումն է, նրանից շնորհներ ստանալուն ուղղված աղոթք:

Վեդայական դիցարանը բավականին բարդ է, բազմազան և դժվարությամբ է ենթարկվում դասակարգման, սակայն ակնհայտ է, որ աստվածների մեծ մասն ունեն տարերային, բնական ծագում: Հնագույն վեդայական աստվածների շարքին են դասվում երկնքի աստված Դյաուսը (հմմտ. հուն. Զևսը և լատին. Դիոսը) և երկրի աստվածուհի Պրիտիվին, որոնց պաշտամունքը արդեն վեդաների կազմման շրջանում անկում էր ապրել¹²: Ավելի ուշ նրանց տեղը զբաղեցնում են երկնքի աստված Վարունան և անձրևի ու ամպրոպի աստված Ինդրան: Այդ շրջանում աստվածները ստանում են մարդակերպություն, նրանց են վերագրվում մարդկային արարքներ և կենսակերպ:

Ռիգվեդայի աշխարհակառույցի համաձայն Տիրեգերը բաղկացած է երեք աշխարհ-ոլորտներից (*լոկա*)՝ ցածր՝ երկիր, միջին՝ մթնոլորտ և բարձրագույն՝ երկինք, որոնք միասին կոչվում էին «*տրիլոկա*» (երեք աշխարհ)¹³: Երեք աշ-

⁹ Encyclopedia of Religion, p. 9550.

¹⁰ Հնդ-իրանական աստվածությունների քննական ուսումնասիրությունը տես Дюмезиль Ж. Верховные боги индоевропейцев. М., 1986, с. 17-19.

¹¹ Encyclopedia of Religion, p. 9550.

¹² Девид М. Найп. Индуизм. Эксперименты в области сакрального, с. 147.

¹³ Альбедиль М. Ф. Индуизм, с. 37-38.

խարհներին համապատասխան Ռիզվեդան ներկայացնում էր նաև աստվածներին: Երկնային աստվածների շարքին էին դասվում մարդկանց ջերմություն տվող իմաստուն և լուսավոր աստվածներ Միթրան, Վարունան, Սուրյան, Փուշանը, Վիշնուն, Ուշասը, երկվորյակ Աշվինները, Սավիտարն ու Ադիտին: Ինդրան, Մարութները, Ռուդրան, Վայուն մթնոլորտային (օդային) աստվածներ էին, իսկ երկրային էին Ագնին, Սոման և Բրիհասպատին:

Վեդայական կրոնի բարձրագույն աստվածն էր Ինդրան, որին նվիրված էր Ռիզվեդայի հիմների մոտ 1/4-ը՝ 250 հիմն: Նա ամպրոպային շանթարձակ աստվածն էր, հզոր ռազմիկ, «... շիկահեր, նա ընթանում է ոսկե կառքով՝ լծված ոսկե բաշերը ծածանող երկու աշխետների և նրա ամպրոպային վաջրա-լախտը փայլում է ինչպես արև: Մայրական կաթի տեղ հարբեցնող սոմա խմելով՝ նա հագեցնում է իր անհագ ծարավը, իսկ նրա ճաշը երեք հարյուր ցուլեր են»¹⁴: Նրա գլխավոր սխրանքը, որը նաև երկրի արարչական ակտ էր, տիեզերական վիշապօծ Վրիթրայի սպանությունն էր: Սպանելով սարսափելի հրեշին իր վաջրայով՝ Ինդրան, նախածին օվկիանոսում լողացող ժայռը կիսելով, ազատում է նրանում փակված արևին, գետերի ջրերին, կովերին և կյանքի այլ բարիքների: Նրա այս արարքը հնդ-եվրոպական վիշապամարտության տիպիկ օրինակ է, որն առկա է հնագույն շատ ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում: Վրիթրայի նկատմամբ հաղթանակից հետո «... անգոյությունը (ասատ) դարձավ գոյություն (սատ), ձևավորվեց աշխարհի եռամաս կառուցվածքը..., աշխարհի առանցքը և համաշխարհային կարգը (ռիտա)»¹⁵:

Երկրային ամենակարևոր աստվածը Ագնին (կրակ) էր: Ռիզվեդան սկսվում է նրան նվիրված հիմնով¹⁶, և Ագնին իրեն նվիրված հիմների թվով երկրորդն է Ռիզվեդայում՝ Ինդրայից հետո: Ագնին խորհրդավոր սրբազան կրակն էր, զոհաբերության գլխավոր խորհրդանիշը, և նրան ընկալում էին նաև իբրև գերագույն քուրմ: Այս գործառնությունը նա հանդես էր գալիս իբրև միջնորդ մարդկանց և աստվածների միջև՝ երկինք տանելով մարդկանց նվիրատվությունները և նրանց տալով աստվածների պարգևները: Ռիզվեդայի կարևոր աստվածների թվին էր դասվում նաև ամենագետ ու ամենատես Վարունան՝ ճշմարտության, համաշխարհային և բարոյական օրենքի (ռիտա) պահապանը, որին ենթարկվում էին թե՛ աստվածները և թե՛ մարդիկ:

Ռիզվեդայում բարի աստվածությունների կողքին կային նաև չար աստվածություններ, որոնք մարդկանց դժբախտություն, հիվանդություններ և աղքատություն էին բերում: Սակայն ընդհանուր առմամբ վեդայական աստվածների հիմնական գծերից էր բարյացակամությունը, նրանք մարդկանց բարեկամն էին:

Ռիզվեդայի կրոնափիլիսոփայական աշխարհայացքի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հատկապես կարևոր է տիեզերածնական պատկերացումների ուսումնասիրությունը, որոնք ներկայացված են բազմազան առասպելների տեսքով:

Ռիզվեդայի տիեզերածնական առասպելները նվիրված են կեցության սկզբ-

¹⁴ Նույն տեղում, էջ 38:

¹⁵ История религии. Т. 1., с. 291.

¹⁶ Ригведа. Мандалы I-IV. Серия "Литературные памятники", М., 1989, с. 14.

նապատճառի փնտրտուքներին: Իբրև սկզբնապատճառ ներկայացվում են մեկ արարիչ-աստված Վիշվակարմանը, մեկ՝ նախամարդ Պուրուշան, մեկ Ոսկե նորածինը և այլն: Տիեզերքի արարմանը, ինչպես արդեն տեսանք, մասնակցում էր նաև Ինդրան: Աշխարհայացքային նշանակության առասպելներից հատկապես հետաքրքրական է տիեզերական «ես»-ի՝ Պուրուշայի (բառացի նշ. մարդ) առասպելը, որը տիեզերածնական առասպելներից գլխավորն է համարվում: Պուրուշան ուշվեդայական տեքստերում անվանվում է նաև Պրաջապատի (արարման տեր):

Ըստ այդ առասպելի՝ սկզբում ոչինչ չկար, միայն հազարագլուխ, հազարածեռք և հազարոտն հսկա նախամարդ Պուրուշան էր: «Նա պառկած էր՝ իր հսկա մարմնով ծածկելով երկիրը, և դեռ տասը մատ էլ վեր խոյացած: Չէ որ Պուրուշան Տիեզերքն է, որը եղել է և կլինի: Այդպիսին են նրա մեծությունն ու չափերը: Աստվածները գալիս են Պուրուշայի մոտ, կապում են նրան ինչպես զոհաբերության կենդանուն, ողողում են նրան յուղով և բաժանում են մասերի»¹⁷: Նրա բերանը դառնում է *բրահման*, ձեռքերը՝ *կշատրի*, ազդրերը՝ *վայշի*, իսկ կրունկները՝ *շուղրա*: Այնուհետև նրա հոգուց ծնվում է լուսինը, աչքերից՝ արևը, շուրթերից Ինդրան և Ագնին, շնչառությունից՝ քամին, պորտից օդային տարածքը, ոտքերից՝ գետինը, ականջից աշխարհի կողմերը¹⁸: Այսպես է առաջանում աշխարհը, ինչպես նաև հասարակական բաժանումը *վառնաների*, որը հնդկական հասարակության գլխավոր առանձնահատկություններից մեկն է:

Վեդայական տիրեզերածնությանը հատուկ են նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են *յաջման* (զոհ), *տապաս* (ջերմություն, տաքություն), *մայա* (մոգական ուժ) և այլն: Նախահնդկական դիցաբանությունից եկող և Ռիգվեդայում զարգացում ապրած վեդայական դիցաբանությունը հետագայում ընդհանուր առմամբ դարձավ հինդուիզմի բարդ դիցաբանական համակարգի հիմքը: Վեդայական աշխարհայացքի շատ գաղափարներ և պատկերացումներ հինդուիզմում շարունակեցին գոյատևել և զարգանալ:

Վեդայական կրոնն առանձնանում է նաև բավականին բարդ և բազմազան ծիսական արարողություններով, որոնցից կենտրոնականը Սոմայի ծիսական հեղումն էր և ըմպումը: Այդ բարդ համակարգին է նվիրված **Յաջուրվեդան**¹⁹ (սանսկրիտ. *յաջնա-զոհ* բառից), որի մեկնությունները հետագայում ձևավորեցին վեդայական կանոնի մաս կազմող նոր ժողովածուներ՝ *բրահմանները*: Յաջուրվեդայի մաս կազմող Մանթրաները նախատեսված էին վեդայական կրոնի զոհաբերությունների ճիշտ իրականացման համար:

Ընդհանրապես վեդայական կրոնում ծեսերը զբաղեցնում էին առանցքային դիրք: Նրանց էր հատկացվում տարվա մեծ մասը: Հիմնական նշանակությունը տրվում էր զոհաբերությանը: Յաջուրվեդան ծիսական գործողություններ կատարող և զոհաբերության բանաձև-*յաջոս* արտաբերող քրմերի համար ուղեցույց էր: Արդյունքում պաշտամունքային պրակտիկան դարձավ հնդկական հասարակական կյանքի վարքի հիմնական ձև՝ որոշելով այդ յուրատեսակ մշակույթը: Վե-

¹⁷ Доброва Е. В. Популярная история мифологии, М., 2003, с. 211.

¹⁸ Дэвид М. Найп. Индуизм. Эксперименты в области сакрального, с. 152.

¹⁹ Encyclopedia of Religion, p. 9551-9552.

դայական կրոնի հիմնական ուղղվածությունը մարդուն և նրա կյանքը զոհաբերությունների աշխարհի չափանիշներով իմաստավորելու հակումն էր: Ծիսական բարդ համակարգը կապված էր քրմերի կողմից ստեղծված օրացույցի հետ, որում նկարագրված էին նորալուսնի և լիալուսնի օրերին իրականացվող, ինչպես նաև նախնիներին մատուցվող զոհաբերությունները, Ազնիին նվիրված զոհասեղանների կառուցման արարողությունները, Ինդրային և մյուս աստվածներին նվիրված ծեսերը:

Յաջուրվեդայում զոհաբերությունը բոլոր նպատակների, ձգտումների և խորհրդածությունների կենտրոնն է: Նրա ճիշտ իրականացումը բարձրացնում է բրահմաններին մինչև աստվածների աստիճանի և նրանց տալիս մոգական իշխանություն: Ուշվեդայական շրջանում հոգևոր կյանքում տեղի են ունենում զգալի փոփոխություններ: Կրոնական միտքը անցում է կատարում ծիսական, փիլիսոփայական և ճգնակեցական ուղղվածությամբ: Հին աստվածներ Վարունային, Ինդրային, Սուրյային փոխարինելու են գալիս Շիվան, Ռուդրան, Վիշնուն: Ծիսական կողմը դառնում է բարդ, ընդարձակ և մանրամասնորեն մտածված: Առաջանում է զոհաբերությունների մասին մի ամբողջ գիտություն: Առաջնային է դառնում այն հայեցակետը, որ աշխարհը գոյություն ունի աստվածների շնորհիվ, իսկ աստվածները ապրում են զոհաբերություններով: Ըստ այդմ՝ աստվածների համակարանքին արժանանալու համար պետք է նրանց նվերներ մատուցել: Պաշտամունքային պրակտիկայում գլխավորը համարվում էր կենդանիների զոհաբերությունը և ծեսերն իրականացվում էին մթնշաղին՝ խարույկի լույսի տակ, հատուկ նախապատրաստված զոհասեղանների մոտ, ուղեկցվում էին հատուկ արարողություններով, երգեցողությամբ, աննախադեպ ճոխ էին և հաճախ տևում էին մի քանի օր: Պաշտամունքի իրականացման համար բրահմանները անցնում էին հատուկ պատրաստվածություն, քանի որ նրանցից յուրաքանչյուրը պետք է հիմնովին տիրապետեր ծեսի մանրուքներին, կանոններին և տեքստերին, որոնք ընթերցվում էին այդ ընթացքում:

Վեդայական կրոնում կարևոր տեղ էր հատկացվում նախնիների պաշտամունքին, որի հիմնական ծեսը հիշատակի ճաշկերույթն էր (*Շրադդհա*), որը պահպանվել է մինչ օրս: Այս ծեսին թույլատրվում է մասնակցել միայն տղամարդկանց:

Վեդաներից երրորդը Սամավեդան է²⁰ (սանսկրիտ. սաման՝ ծիսական երգ): Այն հիմնականում բաղկացած է չափածո հիմներից, որոնք ընդհանրություններ ունեն Ռիգվեդայի հիմների հետ և նախատեսված էին ոչ թե սոսկ ընթերցանության, այլ հատուկ դրանց համար նախատեսված երաժշտությամբ երգելու համար: Սամավեդայի բազմազան և բազմաբնույթ հիմները երգվում էին հիմնականում կարևոր զոհաբերությունների ժամանակ:

Վեդաներից չորրորդը և իր բովանդակությամբ ամենաբացառիկը Աթհարվավեդան է²¹ (մոգական աղոթքների և հմայախոսությունների վեդա): Այս վեդայի բացառիկությունն այն է, որ այն արտացոլում է հին հնդկական հասարակական կյանքի տարատեսակ կողմերն ու մանրամասները, և եթե մյուս վեդաները ուղղ-

²⁰ Encyclopedia of Religion, p. 9551-9552.

²¹ Նույն տեղում, էջ 9551:

ված են կամ նվիրված են աստվածներին, ապա Աթհարվավեդան ավելի անմիջականորեն է ներկայացնում մարդկան ցանկություններն ու կարիքները: Այս վեդայում խոսքը հիմնականում ոչ թե աստվածների և առասպելների, այլ մարդունրա հասարակական և անձնական կյանքի, կենցաղի, սովորությունների, հիվանդությունների և այլնի մասին է: Աթհարվավեդան առաջին հնդկական տեքստն է, որն արտացոլում է վեդայական կրոնի և մոգության ամուր կապը: Այս ժողովածուի գործողության հիմնական ոլորտը ընտանեկան ծեսերն են, որոնք կենտրոնացված էին տնային օջախի շուրջ: Նրանում հավաքված են երկարակեցության, առողջության, բարգավաճման, քաղության, բուժիչ, հիվանդությունների և մոլագարությունների դեմ հմայախոսություններ և հմայություններ:

Վեդայական կրոնի հետագա զարգացման արդյունքում, մ. թ. ա. VIII դարից սկսած, տեղի են ունենում որոշակի կրոնափոխություններ, աշխարհայացքային փոփոխություններ, առաջ են գալիս նոր սրբազան տեքստեր և հին արիացիների կրոնն աստիճանաբար իր տեղն է զիջում մեկ այլ կրոնական համակարգի՝ բրահմանականությանը, որն իր հերթին պետք է դառնար հինդուիզմի գլխավոր գաղափարական հիմքը: Սակայն պետք է փաստել, որ ժամանակակից հինդուիզմի ձևավորման գործում գլխավոր դերակատարությունը այդուհանդերձ պետք է տրվի վեդայական կրոնին, որն այսօր էլ զարմացնում է իր բազմազանությամբ, գաղափարական և աշխարհայացքային յուրատեսակ մոտեցումներով ու պատկերացումներով, իսկ նրա սրբազան տեքստերը՝ Վեդաները, այսօր էլ ճնդկաստանում շարունակում են պահպանել իրենց բարձր հեղինակությունը և ծիսապաշտամունքային նշանակությունը:

ИДЕОЛОГИЧЕСКИЕ ИСТОКИ ИНДУИЗМА. ВЕДИЧЕСКАЯ РЕЛИГИЯ

П. А. БАРСЕГЯН

Статья посвящена самой распространенной религии современной Индии — индуизму, и изучению одного из его идеологических истоков ведической религии. В общих чертах представляются основные закономерности происхождения, формирования и развития ведической религии, начиная с вторжения индо-арийских племен на полуостров Индостан до составления и канонизации ведических текстов на рубеже II-I тысячелетий д.н.э. Отдельно освещаются пантеон ведической религии и четыре основные веды: Ригведа, Яджурведа, Самаведа и Атхарваведа.

IDEOLOGICAL SOURCES FOR HINDUISM: VEDIC RELIGION

P. A. BARSEGHYAN

The article analyzes the most spread contemporary religion of India - Hinduism and one of its ideological sources - Vedic religion. The author generally describes the common tendencies of the origin, formation and development of Vedic religion starting from the invasion of Arian tribes into the Indian peninsula until the II-I thousand years when the Vedic texts were worked out and canonized. The article separately analyzes the pantheon of Vedic religion and four main literary sources - Rigveda, Yajurveda, Samaveda and Atharvaveda.